Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) փորձաքննության և վերլուծությունների վարչության գիտական փորձաքննության բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1. մասնակցություն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, գիտական դրամաշնորհային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական հետազոտությունների հայտերի և հաշվետվությունների առցանց ընդունման, տվյալների մշակման և փորձաքննության գործընթացի կազմակերպման աշխատանքներին,
2. մասնակցություն միջազգային ինդեքսավորված ամսագրերում գիտական հրապարակումների խրախուսման մեխանիզմների մշակման և ներդրման աշխատանքներին,
3. մասնակցություն փորձագետների տվյալների հավաքագրման համակարգի ստեղծման աշխատանքներին,
4. մասնակցություն փորձաքննության նպատակով արտերկրի գիտնականների ներուժը օգտագործելուն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին,
5. մասնակցություն Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության այլ փաստաթղթերից բխող միջոցառումների իրականացման աշխատանքներին:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. բարձրագույն կրթություն,
2. օտար լեզուների իմացություն,
3. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
4. «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» օրենքների և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը

Փորձագետը ներգրավվում է չորս ամիս ժամկետով:

Փորձագետի պարտականությունները

1. բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին ամփոփ հաշվետվություն,
3. պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5. իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. լուսանկար 1 հատ (3x4 չափի),
2. դիմում (ձևը կցվում է),
3. անձնագիր (ՀԾ համարանիշ) կամ նույնականացման քարտ,
4. դիպլոմ (դիպլոմներ),
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
6. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական,
7. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է),
8. ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թվականի մարտի 19-ը: